491.99(07)
Ա-81
18 MAY 2010

ՀՍՍՌ ԳԵՏ. ՄԱՆԿ. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԵՌԱԿԱ ԲԱԺԻՆ
ԼԵԶՎԱԳՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
1 ԿՈՒՐՍ. 1940—41 ՈՒՍ. ՏԱՐԻ

ԹԵՄԱՆԵՐ ԳՐԱԲԱՐԻ ԿՈՆՏՐՈԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ԹԵՄԱ I. (Պետք է ներկայացնել մինչև 1941 թվի մարտ ամսի 15-ը, մինչև կես տարի ծավալով)։

1. Գրաբարից աշխարհաբար թարգմանել հետևյալ հոդվածները.

1. Որոշ ապրատին

Արք երկու էին ի քաղաքի միում, մինն մեծատուն և միւսն աղքատ։ Եւ մեծատանն էին հօտք և անդեայք բազում յոյժ։ Եւ աղքատին և ոչինչ, բայց որոշն մի փոքր. և որոշն հաստատեալ էր ընդ որդիս նորա ի միասին. ի հացէ նորա ուտէր և ի բաժակէ նորա ըմպէր և ի ծոց նորա ննջէր. և էր նորա իբրև զդուստր։ Եւ եկն անցաւոր առ այրն մեծատուն և խնայեաց մեծատունն առնուլ ի հօտից իւրոց և յանդէոց իւրոց. և էառ զորոշ աղքատին և արար առնն եկելոյ կերակուր։

Որոշ—գառ
Այր—մարդ
Արք—մարդիկ
Ի քաղաքի միում—մի քաղաքում
Մեծատուն—հարուստ
Յոյժ—շատ
Անդեայք—նախիրներ
Հաստատեալ էր—սովորել էր, ընտելացել էր

Ընդ որդիս նորա—նրա որդիների հետ

Անցաւոր—ճանապարհորդ
Յանդէոց իւրոց—յուր նախիրներից
Էառ—վերցրեց
Արար կերակուր—կերակուր պատրաստեց։
Առնն եկելոյ—եկած մարդու համար։

491·99(07)
Ա-81

2. Գառուն

Զմեռն էանց, անձրևք անցին և գնացեալ մեկնեցան. ծաղիկք երևեցան յերկրի. ժամանակ յատանելոյ եհատ. ձայն տատ-

1885
41

09 APR 2010
70. 146

քակը լսելի եղև յերկրի մերում. թգենի ընձիւղեաց զբողքոջ իւր. այգիք մեր ծաղկեցան և ետուն զհոտս իւրեանց։

Էանց—անցավ	Յատանելոյ—կտրելու, էտելու
Անցին—անցան	
Գնացեալ—գնալով	Եհաս—հասավ
Մեկնեցան—հեռացան	Ընձիւղյաց—ծիլ տվավ
Յերկրի—երկրի մեջ	Ետուն—տվին

3. Աղքատն

Աղքատն ի տօթոյ տապանայ, ի ցրտոյ դողայ, որովայնն սին և մարմինն մերկանդամ. հերքն թաղկեալք, դէմքն դեղնեալ և թոշոմեալ. թափառի, վարանի, սուղ ինչ կերակուր բազում աշխատութեամբ գտանէ. և երկիւղիւ ի դրունս, երկիւղիւ ի դաւիթս, երկիւղիւ ի տունսն մտանէ։ Ի տունսն յանասնոցն երկնչի. զի ձիքն կիցս հանեն, եղինքն եղջիւր ածեն, շունքն վիրաւորեն և մարդք չարք անողորմք բամբասեն և թշնամանեն։

Ի տօթոյ—տոթից	Ի տունսն—տներում
Տապանալ—այրվել	Յանասնոցն—անասուններից
Սին—դատարկ	
հեր—մազ	Երկնչիլ—վախենալ
Թաղկեալ—խճճված	Կիցս հանել—քացի տալ
Թոշոմեալ—թառամած	Եղջիւր ածել—պոզահարել
Վարանիլ—շվարել, մոլորվել	Թշնամանել—հայհոյել
Երկիւղիւ—երկյուղով	Սուղ—քիչ, պակաս

Թարգմանութիւնը կատարել պարզ, գրել մաքուր, մի երեսի վրա արտագրել գրաբար տեքստը, իսկ մյուս երեսի վրա գրել աշխարհաբարը։

2. Ծանարհել՝ պատմել, խնդրել, դողալ, խաղալ, գենուլ, հեղուլ բայերը ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ ժամանակներով։

3. Հոլովել՝ ի հոլովմամբ ձայն, քայլ բառերը։

ու	»	ծով, դաս	»
ո	»	գետ, ցող	»
ա	»	տիտան, աչք	»
(Ներքին թեքում) ե	»	վագր, անգղ	»
ա	»	մրջիւն, խնամութիւն	»

ԹԵՄԱ II. (Պետք է ներկայացնել մինչև 1941 թվի ապրիլ ամսի 30-ը կես տետրի ծավալով)։

1. Գրաբարից աշխարհաբար թարգմանել հետևյալ հոդվածները.

1. Բու եւ արծիւ

Բու հրեշտակ առաքեաց առ արծիւ. և խնդրեաց զդուստր նորա հարսն, ասելով. Դու տունչեան քաջամարտիկ ես և ես գիշերոյ. պատշաճիմք ի խնամութիւն։ Եւ յետ բազում թախանձանաց հանձն առ տալ։ Եւ ի լինել հարսանեացն ի տուէ լոյս ոչ կարէր տեսանել փեսայն, և ծաղր առնէին բազմեալքն. և իբրև եղև գիշեր և ոչ հարսն եռես լոյս. յաճախեաց և անդ այպանութիւն. և վասն այնորիկ փութով լուծաւ հարսանիքն։

Հրեշտակ—դեսպան, խնամախոս. Պատշաճիլ—հարմարվել. Ծաղր առնել—ծաղրել. Բազմիլ—փառքով ու պատվով նստել. Բազմեալք—նստածները. Յաճախել—ավելանալ, շատանալ. Այպանութիւն—խայտառակություն. Լուծանել—քանդել։

2.

Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի. հրովարտակս գրէր, պնդագնացսն արձակէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ։ Եւ այս է պատճէն հրովարտակին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ արեաց և անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. զուք ողջ լերուք և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ։

«Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք, գնացաք յերկիրն յունաց և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն։ Դուք զբարի զմտաւ ածէք և անսպառ լերուք յուրախութեան. բայց բան զայս կատարեցէք վաղվաղակի, զոր ասեմք.

«Մեք ի մահ եղաք անվրէպ խորհրդովք խաղալ, գնալ յաշխարհն արևելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց. զուք իբրև զհրովարտակս

10-146

զայս տեսանէք, անխափան վաղվաղակի այրենի գումարեցէք առաջի քան զիս, յանդիման լերուք ինձ յԱպար աշխարհին»։

Որ էին նոքին բանի—նույն կարծիքին էին
Բան—խոսք
Պնդագնպան—սուրհանդակ
Արձակել—ուղարկել
Արի—պարսիկ
Ոչ արի—ոչ պարսիկ
Բաղմասցի ի ձեզ—թող շատանա ձեզ
Ողջոյն մարդասիրութեան—մարդասեր ողջույն
Ողջ լերուք—ողջ եղեք
Մեք մեղէն—մենք ինքներս
Դիցն—աստվածների
Աշխատ առնել—նեղություն տալ
Առանց ինչ աշխատ առնելոյ—առանց որևէ նեղություն տալու
Զմտաւ ածել—մտածել
Անապատ—անվերջ
Զոր ասեմքս—որ մենք ասում ենք
Ի մտի եղաք—մտքում դրինք
Գումարեցէք—ժողովեցեք
Առաջի քան զիս—ինձնից առաջ
Յանդիման լինել—ներկայանալ
Յանդիման լերուք—ներկայացեք։

2. Խոնարհել՝ աղաչել, խոցոտել, սիրել, աղալ, կարդալ, թողուլ բայերը ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ ժամանակներով։

3. Հոլովել՝ ի հոլովմամբ ախտ, երկիւղ, բան բառերը

	ու	»	վարձ, փոքր, գանձ	»
	ո	»	փուշ, ծառ, տոթ	»
	ա	»	Զրամ, Արշակ, ձեռք	»
(ներքին թեքում)	և	»	եզր, անգլ	»
	ա	»	քաջություն, շուն	»

Ձեռնարկ. Ա. Առաքելյանի «Գրաբարի իքնուսուցման ձեռնարկ». այդ աշխատությունը սպառված լինելով, ձեզ. մնում է. ձեռք բերել բարձր կուրսերի՝ ուսանողներից։

Գլխավոր՝ Ա. ՌՈՒՌՈՒՇԵՎՆ.

տպարան, պատվ. 433, տիրաժ 750. 1940 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0243462